ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «28» օգոստոս 2023թ № 1602-Լ

ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սերմերի և տնկանյութի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով՝

հրամայում եմ.

1. Սահմանել մշակաբույսերի սերմնադաշտերի և տնկարանային տարածքների դաշտային հետազոտությունների հայտի ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 5-ից:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի օգոստոսի 28-ի
N 1602-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում մշակաբույսերի սերմնադաշտերի և տնկարանային տարածքների դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ սերմ արտադրողի և տնկանյութ արտադրողի կողմից հայտի (այսուհետ՝ հայտ) ներկայացման ընթացակարգը:

2. Հայտը ներկայացվում է սերմնադաշտի ցանքից կամ տնկարանային դաշտի հիմնումից առնվազն մեկ ամիս առաջ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների մասին հայտի ձևին համապատասխան:

3. «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն) հայտը ներկայացվում է առձեռն, փոստով կամ էլեկտրոնային եղանակով՝ հայտը ներկայացնողի ընտրությամբ: Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

4. Ներկայացված հայտը կազմակերպության կողմից համարակալվում է և գրանցվում գրանցամատյանում՝ նշելով հայտի համարը, հայտատուի անուն, ազգանունը կամ անվանումը, մշակաբույսի տեսակը, սերմնադաշտի մակերեսը և գտնվելու վայրը:

6. Գրանցված և համարակալված հայտի տեղեկություններն օգտագործվում են սերմերի և տնկանյութի հավաստագրման գործընթացում:

7. Հայտատուի հայեցողությամբ հայտին ընթացք չտալու դեպքում հայտատուն պետք է առձեռն, փոստով կամ էլեկտրոնային եղանակով կազմակերպությանը գրավոր տեղեկացնի դրա մասին:

8. Կազմակերպության կողմից հայտը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն սերմերի և տնկանյութի հավաստագրման գործընթացի մերժման դեպքերում: